որոնում է նոյնիսկ ռամկի, դարերով թշուառացած ռամկի, հանգստութեան եւ բարօրութեան մէջ: Նա ժողովրդի մարդ էր եւ ժողովրդի համար ծնուած:

Ես առաջին անգամն էի տեսնում մի այսպիսի սիրելի անձնաւորութիւն: Նա այն տեսակ աբեղաներիցն էր, որի բերանում Յիսուսի, Մովսէսի եւ Պօղոսի անունների հետ ստեպ յիշւում էին իր ազգի նահապետների անունները, ոչ միայն հասարակ խօսակցութեան մէջ՝ այլեւ սուրբ տաճարի բեմից: Նա չէր խօսում բիբլիական Պաղեստինի եւ «վերին Երուսաղէմիէ երանութիւնների մասին. նրա ուխտեալ երկիրը Վասպուրականն էր: Հայրենասիրութիւնը հասնում էր նրա մէջ մինչեւ մոլեռանդութեան, իսկ կրօնասիրութիւնը՝ մինչեւ բարձր առաքինութեան:

Նրան տեսնելիս, ես մտաբերում էի մեր հինգերորդ դարերի աբեղաներից մէկին, որ, կարծես, նոր էր վերադարձել Աթէնքից, եւ ցուպը ձեռին, մի թափառական դերվիշի նման, շրջում էր հայրենի երկրի զանազան կողմերը եւ տարածում էր այն լոյսն ու գիտութիւնը, որ իր հետ բերել էր Սոկրատի եւ Արիստոտէլի մայրաքաղաքից: Հայրենիքը չէ ընդունում իր մէջ կրթութեան նոր առաքեալին, իսկ խաւարասէր կղերը ատելութեամբ կատաղած է նրա դէմ: Բայց նա արհամարհում է խաւարասէրների հալածանքը եւ հաստատ, անվեհեր կամքով առաջ է տանում սուրբ գործը: Մի տեղից հալածւում է նա, միւս օրը յայտնւում է մի այլ տեղում եւ սկսում է ցանել իր հայրենակիցների անապատ դարձած մտաւոր անդաստանում այն բարի սերմերը, որ ինքը բերել էր հեռաւոր երկրներից: Այդպէս էր վարոել եւ Հայրիկը. ամբողջ Վասպարականը նրա ընդարձակ ագարակն էր, իսկ ինքը՝ մի անձնուէր մշակ:

Այդ մարդը կատարելապէս սիրահարուած էր իր հայրենիքի՝ Վասպուրականի վրայ: Իսկ Վարագը, Վանը, Վանայ ծովակը իր շրջակայ գաւառներով՝ նրա մտածութեան գեղեցիկ առարկաներն էին: Բայց նա իր հայրենիքում նոյն դրութեան մէջն էր, որպէս մի ժամանակ Խորենացին Տարօնում: Կղերը նրա դէմ եւս լարում էր զանադան որոգայթներ: Այդ էր պատճառը, որ Ասլանը յիշելով քանի օր առաջ պատահած աղէտաւոր անցքը, եւ յայտնելով իր խնդակցութիւնը նրա ազատութեան մասին, ասաց.

— Մի՛ վհատեցէք, Հայրիկ, նահատակութիւնը առաքելութեան հետ միշտ լծորդաբար է ընթանում:

Հայրիկը պատասխանեց իր սովորական ժպիտով:

— Այդպիսի դէպքեր ինձ չեն կարող վհատեցնել, ես մահից չեմ վախենում: Բայց չէի կամենայ եւ մեռնել, պարոն բժշկապետ, որովհետեւ, ով որ նպատակներ ունի, ով որ գործ ունի կատարելու, կեանքը նրան պէտք է: